

որ քաջ Ֆրանսազէտ ալ էր և բրաւ հեղինակութիւններ ֆրանսական լեզուով (Օսմանեան պետութեան պատմութեան վրայ (տպ. Ի Փարիզ 1784) ու առաւ Ի փոխարէն հայասէր Սուլթան Սելիմէն մեծ պարգեւ: Ինք այս Մուրատնանը՝ զնացած էր նաեւ 1792ին Վինետիկի վանքն և հոն ալ բանասիրած էր: Իր հրապարակային ու մատենադրական վերջին անունն էր՝ Ասպետ Օսսոնի և այս է պատճառն՝ որ Եւրոպացիներն յոյն կանուանեն զինքը: Այս հայ ասպետն՝ եղաւ նաեւ թարգման շուէտական դեսպանին և առաւ, Շուէտի մէջ, Օսսոնի ասպետութեան այդ տիտղոսն ու պատիրը, որոկէ իբրեւ լիազօր դեսպան եկաւ Պոլիս: Պոլիսէն դուրս մեռած է: Չափազանց յարած գրեյու կարչայու՝ դեսպանական ու պաշտօնական գործերուն մէջ անգամ՝ օրն ամբողջ եօթը ժամ՝ կը զբաղէր գրականութեամբ. արժանիքով՝ Երեմիա Չէլէպիի պէս, իսկ պաշտօնով՝ անկէ շատ վեր անձնաւորութիւն մը¹, որուն անունը յիշուած է նաեւ Երեւելի արանց եւրոպական բառարկրքերու մէջ:

Գրադէտ ամիրայ մըն էր Մարգար Խօճենց Չաքարիան ալ, որ պատմութեանս միջոցին Պոլիս գտնուելով՝ Պէյօղլուի գերեզմանատունին մէջ տօն օր մը ունեցած է հոշակաւոր և իմաստուն զրուցատրութիւն մը ժամանակին Անատոլու - Գազասկէրին հետ՝ Երրորդութեան վրայ, որ արձանագրուած է Սիօն Երուսաղէմի հանդէսին մէջ: Ունի Հ-գիւ-հ Բ-նից Խ-լ-գիւ-հ տպեալ՝ առ իւր որ, ին և առաջին թարգմանութիւն մը Տիւրք-ի-Յ Արի-ճ+ ին՝ տպագրուած նոր Նախջեւան՝ ըն: հ-վ-նի-տ- էր(ն-հ-նի-գի-տ Ս-ր-բ Խ-ւ-լ-նի-ն 1795ին: 1799ին կը յիշուին՝ Բինկեանցի մահատի Գետրոս ամիրայ Ազրիանուպոլիսի մէջ, ու իր որդիները՝ Պաղտասար, Յովհաննէս, Խաչատուր, որ տպագրել տուած են Սիւնեցիին Ա. ամ Գիրքը, հիներուն լաւագոյն տաղաչափեալ քերթուածներէն:

Ռուսիայի մէջ ալ՝ 1789ին ծնած էր Խաչատուր Լազարեանց, Ռուսիայի պետական խորհրդական, որ նուիրեց իր նախնեաց հիմնած Լազարեան հեմարանին մե-

¹ Դարապատումէն ու աւանդութիւնէ: